ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2010թ. դեկտեմբերի 22-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական կոչման շնորհում.

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Ա. Նիկողոսյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Ա. Նիկողոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Ա. Նիկողոսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաղորդումը ուսումնական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Մեղրյան):

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Իսկոյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման աշխատանքների և ընթացքի մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

Հ. Խաչիկյանը ներկայացրեց, որ քննաշրջանը բակալավրիատում սկսվում է 2010 թվականի դեկտեմբերի 16-ից, մագիստրատուրայում՝ դեկտեմբերի 28-ից և շարունակվելու է մինչև դեկտեմբերի 30-ը: Հունվարի 10-ից կսկսվեն քննությունները մինչև հունվարի 27-ը: Իսկ փետրվարի 3-ից փետրվարի 12-ը նախատեսվում է անցկացնել առաջին լուծարքային շրջանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2010-2011 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4.1. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Վ. Քոչարյանի «Защита прав национальных меньшиств в практике Европейского суда по правам человека» վերտառությամբ աշխատությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Կ. Գևորգյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

4.2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ սահմանադրական իրավունքի ամբիոնի կողմից պետական ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանության կազմակերպման և գործունեության սահմանադրական հիմունքները» վերտառությամբ թեմայի հիման վրա պատրաստված աշխատանքը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

4.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Մերի Համբարձումյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով, որ Մերի Համբարձումյանը հաշվետու տարում հանձնել է թեկնածուական մինիմումի ստուգարքը՝ «Ինֆորմատիկա» առարկայից, սկսել է աշխատանքի առաջին գլխի շարադրանքը, ձեռք է բերել մասնագիտական գրականություն, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.4. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Վարդուշ Եսայանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով, որ Վարդուշ Եսայանը հաշվետու տարում հանձնել է թեկնածուական մինիմումի քննությունները՝ «Փիլիսոփայություն» և «Օտար լեզու» առարկաներից և ստուգարքը՝ «Ինֆորմատիկա» առարկայից, հրապարակել է մեկ գիտական հոդված, ևս մեկը հանձնել է տպագրության, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.5. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսորներ Տ. Բարսեղյանի և Գ. Ղարախանյանի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, 4-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով)» վերտառությամբ դասագիրքը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Ռ. Մելիքյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն,

ա/ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, 4-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով)» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության,

բ/ միջնորդել ԵՊՀ խորհրդին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը :

4.6. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Աննա Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Կ. Գևորգյանը, Ա. Ղազինյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Աննա Հակոբյանի՝ «ԵՄ և Հարավային Կովկասի արտաքին առևտրի իրավական կարգավորման հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»,

բ/ Աննա Հակոբյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ., դոցենտ Ա. Ղազինյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.7. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Արթուր Չախոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության փոփոխման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Լ. Օհանյանը. Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ Արթուր Չախոյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատած թեման «Հատուկ գիտելիքների կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները հանցագործությունների քննության ընթացքում» վերաձևակերպել հետևյալ կերպ. «Մասնագետի կողմից կիրառվող հատուկ

գիտելիքների քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները հանցագործությունների քննության ընթացքում», բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ-00.04 - «Դատարանակազմություն, Քաղաքացիական դատավարություն, Քրեական դատավարություն, Կրիմինալիստիկա, Դատական փորձաքննություն, Փաստաբանություն, Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.8. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Էրիկ Արզումանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը. Ս. Առաքելյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Էրիկ Արզումանյանի՝ «Շորթման համար քրեական պատասխանատվության հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Էրիկ Արզումանյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ., դոցենտ Ա. Առաքելյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*